ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատությունը նվիրված է Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. նյութական մշակույթի ձևավորման, նրա ակունքների, զարգացման միտումների, Առաջավորասիական երկրների համակարգում ունեցած նրա տեղի ու դերի, ինչպես նաև Անդրկովկասի հարևան մշակույթների հետ ունեցած առնչությունների վերլուծությանը:

Մ.թ.ա. VI-IV դարերը Հայաստանի պատմության ամենակնճռոտ և հետաքրքիր ժամանակաշրջաններից մեկն են, երբ սկսվում է Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման նոր շրջափուլ, որը համապատասխանում է Աքեմենյան դարաշրջանին: Հայկական լեռնաշխարհում կործանվում է հինարևելյան տիպի Ուրարտական պետությունը և բարձրանում հայկական թագավորությունը՝ ժառանգելով երկրի թե տարածքը, թե էթնիկ կազմը: Այս դարաշրջանում է, որ ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը, ստեղծվում է միասնական պետություն և միասնական անհամեմատ միատարր մշակույթ:

Քննության առարկա դարաշրջանի Հայաստանի պատմությունն ու մշակույթն իրենց արտացոլումն են գտել թե հայրենական, թե օտար գրավոր աղբյուրներում: Սակայն միայն գրավոր աղբյուրները բավարար հիմք չեն ամբողջությամբ վերականգնելու Հայաստանի այդ դարերի պատմության և հատկապես մշակույթի պատկերը: Ներկա աշխատանքի համար աղբյուր են ծառայել հիմնականում հնագիտական նյութերը, որոնք իրենց առավել մասսայականությամբ հնարավորություն են ընձեռում վերակերտելու հասարակության կյանքի այն կողմերը, որ գրավոր աղբյուրներում չեն արտացոլվում: Այս դարաշրջանի մշակույթին վերաբերող նյութեր հայտնաբերվել են դեռևս Հայաստանի հուշարձանների պեղման և ուսումնասիրման սկզբնավորումից ի վեր, առանց պատշաճ ընկալման ու գնահատման կուտակվել թանգարաններում: Դրանց մի չնչին մասը միայն, մ.թ.ա. VII-VIդդ. մշակույթի ուսումնասիրության առիթով, գիտական շրջանառության մեջ դրեց Հ.Ա.Մարտիրոսյանը (151, էջ 10, 15):

Սկսած ետպատերազմյան տարիներից, երբ Հայաստանում լայն թափ ու ընդգրկում ստացան հնագիտական նպատակային պեղումները և համակարգված ուսումնասիրությունները, հնարավորություն ստեղծվեց ոչ միայն հատուկ ուշադրություն դարձնելու հետուրարտական և նախաքրիստոնեական ժամանակաշրջանի (մ.թ.ա VIդ.-մ.թ.ա. IIIդ) մշակույթի վրա, պարբերացման ենթարկել այն, այլև առանձնացնել մ.թ.ա. VI - IV դդ. նյութական մշակույթը՝ որպես ուսումնասիրության առանձին խնդիր: Այս դարաշրջանի նյութական մշակույթի բնորոշ գծերը և առանձնահատկությունները արդարացնում են երեքդարյա հատվածի առանձնացումը, որն ընդունված է բոլոր ուսումնասիրողների կողմից՝ Բ.Բ.Պիոտրովսկի, Բ.Ն.Առաքելյան, Հ.Ա. Սարտիրոսյան, Գ.Ա.Տիրացյան, Ա.Ա.Եսայան, Ժ.Դ.Խաչատրյան և այլք: Գիտական խնդրի հիմնավորումը՝ Հայաստանի մ.թ.ա. VI - IVդդ. նյութական մշակույթի առանձնահատուկ ուսումնասիրությունը, առաջ քաշվեց 50-ական թվականներին, երբ պեղվեցին Արին բերդը, Ջրառատի, Աթարբեկյանի, Կարմիր բլուրի և Իջևանի մ.թ.ա. VI - IVդդ. դամբարանները և այլ հուշարձաններ:

Այդ թվականներին սկիզբ առած և մինչև օրս շարունակվող պեղումների նյութերը նախնական հետազոտման, հրապարակման և հատուկ ուսումնասիրման իմաստով, ենթակա են որոշակի պարբերացման:

Պարբերացման մեջ արդեն ի հայտ են գալիս և խնդրառու ժամանակահատվածի առանձնացման նախնական միտումները, և ապացուցված հիմնադրույթները:

Հետևենք գիտական խնդրի հասունացմանը նախ պեղումների ժամանակագրության, ապա և ուսումնասիրության մակարդակներում:

1951 թվականին սկսած ուրարտական ռազմական և վարչատնտեսական կենտրոն էրեբունիի (Արին բերդի) պարբերական պեղումները պարզեցին, որ ամրոցում կյանքը շարունակվել է նաև հետուրարտական շրջանում: Ժամանակահատվածի ճարտարապետությունը, նյութական մշակույթի տարբեր բնագավառները ներկայացնող բացառիկ նյութերը վեր հանեցին ուրարտա-հայկական ճարտարապետական առնչությունների (173), սատրապական կենտրոնների (57, էջ 99-114), նյութական մշակույթը,

առևտրական կապերը՝ բնորոշող բազմաթիվ խնդիրներ (15, էջ 94; 16, էջ 104-115): Հ.Հ.Մնացականյանը նույն թվականին պեղեց Ստեփանավանի Ղաչաղան, Հրազդանի Ջրառատ և Աթարբեկյան գյուղերի հարևանությամբ տարածված դամբարանադաշտերը: Աթարբեկյանի դամբարանադաշտը հրատարակելիս նա (1954թ.) առանձնացրեց դաշտի աջակողմյան դամբարանները, թվագրելով դրանք VI-IVդդ. (166, էջ 31): Մինչ այդ (1952թ.) Հ.Ա.Մարտիրոսյանը Ղաչաղանի ուսումնասիրության ժամանակ արդեն առանձնացրել էր 4 դամբարանը և վերագրել այն քննարկվող դարերին (151, էջ 69):

Հրապարակի վրա եղած հնագիտական նյութերն առանձնապես առատ չէին, այնուամենայնիվ Գ.Ա.Տիրացյանը 1957թ. փորձեց պարբերացնել մ.թ.ա. VI- մ.թ. III դարերի հայկական մշակույթը: Դա պարբերացման առաջին կարևոր քայլն էր: Ուրարտուի անկումից մինչև վաղ միջնադար ընկած ինը դարյա պատմությունը բաժանելով երեք ժամանակահատվածի, նա առանձնացրեց մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը, բացահայտելով դրա բնորոշ և հիմնական գծերը (200, էջ 77-82): 1961թ. Հ.Հ.Մնացականյանը և Գ.Ա.Տիրացյանը հրատարակեցին Ջրառատի դամբարանի նյութերը, գիտականորեն հիմնավորեցին դրանց թվագրումը: Հետևելով թաղման ծեսի, խեցեղենի և զենքի ձևերի կապին նախորդ դարաշրջանների մշակույթի հետ, ընդգծեցին տեղական տարրերի գերակշռումը դամբարանում (169, էջ 69-83):

Հ.Ա.Մարտիրոսյանը 1964 թվականին հրատարակած իր «Հայաստանը բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում» հիմնաքարային մենագրության մեջ իրավացիորեն տարբերակեց 1955 թվին պեղված Ստեփանավանի շրջանի Կուրթանի և Կիրովականի Մակարաշենի դամբարանների համալիրները մ.թ.ա. VII-VIդդ. մշակույթից (154, էջ 286-291): Իսկ 1956-58 թթ. Թեյշեբաինի քաղաքային թաղամասերի պեղումների ժամանակ բացված մ.թ.ա. VI-IVդդ. երեք դամբարանների նյութերի հրապարակման առիթով Մարտիրոսյանն այդ դարերի համար գիտական շրջանառության մեջ դրեց «վաղ հայկական» տերմինը, լուրջ դիտարկումներ անելով այդ դարերի մշակույթի տարբեր ճյուղերի, դամբարանների կառուցվածքի, խեցեղենի ձևերի, դրանց ծագման և այլ հարցերի վերաբերյալ (153, էջ 137-150): Է.Վ.Խանզադյանը Կիրովականում շինարարական աշխատանքների ժամանակ պատահաբար հայտնաբերված Քյոսիճոթեր բնակավայրը պեղելիս և ուսումնասիրելիս վերին շերտի նյութերը վերագրեց վաղ հայկական մշակույթին (21, էջ 75-78):

Այս խառը կամ ուղեկից հայտնաբերումներին հաջորդեց առանձնացված՝ ռեգիոնալ բնույթի պեղումների շրջանը:

Այսպես. Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրության համար բացառիկ տեղ ունեն 1962 թվին սկսած և մինչև օրս շարունակվող Արգիշտիխինիլի-Արմավիր քաղաքի պեղումները, որոնք հնարավորություն տվեցին բարձրացնելու բազմաթիվ հարցադրումներ, այդ թվում և Արմավիրի մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթի խնդիրը (70, էջ 157-174): Ս.Ա.Եսայանը (1969թ.) պեղեց գիտությանը քաջ հայտնի Կարմիր բերդ (Թազաքենդ) դամբարանադաշտին կից բնակատեղին, որի վերին շերտի նյութերը վերաբերում են անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջաններին: Այս նյութերի մեջ որոշակիորեն առանձնանում է նաև մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթի հատկանիշները կրող մի խումբ (106, էջ 40):

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում հնագիտական հետախուզական աշխատանքների միջոցին Ս.Ա.Եսայանը 1956-70-ական թթ. պեղեց և ուսումնասիրեց տարբեր դարաշրջանների բազմաթիվ հուշարձաններ: Պեղումներն ուղեկցվում էին առանձին հուշարձաններին նվիրված հրապարակումներով և հոդվածներով: Երկար տարիների արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին «Հյուսիս-արևելյան Հայաստանի ցեղերի հնագույն մշակույթը (մ.թ.ա. III-I հազարամյակ) մեծածավալ մենագրության մեջ: Հետախուզական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին և պեղվեցին նաև մ.թ.ա. VI-IVդդ. երեք տասնյակի հասնող հուշարձաններ, որոնք կարևոր դեր խաղացին այդ դարերի մշակույթի ուսումնասիրության գործում: Ի տարբերություն արդեն հայտնի դամբարանադաշտերի, առանձնահատուկ նշանակություն ունեցան նրա հայտնաբերած տասնյակ ամրոցբնակավայրերն իրենց պաշտպանական համակարգերով, ճարտարապետական ու շինարարական պատկերով, նյութական մշակույթի հարուստ մնացորդներով (109, էջ 44-98, 148-156): Գավառագիտական ուսումնասիրությունների միջոցին, այս նույն տարիներին, մ.թ.ա. VI - IVդդ. երկու հուշարձան պեղեց և հրատարակեց Ա.Չիլինգարյանը (53, էջ 69-73: 54, էջ 259-264):

Սևանի շրջանի կիկլոպյան ամրոցների չափագրմամբ և մասնակի ուսումնասիրությամբ զբաղվեց Գ.Հ.Միքայելյանը (1960-1965թթ.): Արդյունքներն ամփոփվեցին «Սևանի շրջանի

կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ: Այս ամրոցների մի մասը ուրարտացիների կողմից նվաճվելուց հետո վերակառուցվել և դարձել էին նրանց հետագա նվաճումների հենարան և կառավարման կենտրոններ՝ Բերդի գլուխ (Խալդ աստծո քաղաք), Վարդաձոր (Թուլիխու), Ծովինար (Թեյշեբա աստծո քաղաք) և այլն (50, էջ 18-19, 331-332): Այս ամրոց-բնակավայրերի մ.թ.ա. VI–IVդդ. վերաբերող նյութերի ուսումնասիրություններն հանգեցրին այն եզրակացության, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև հետուրարտական շրջանում: Մարտունու և Վարդենիսի շրջաններում Ժ.Դ.Խաչատրյանի և Ա.Ա.Քալանթարյանի հետախուզական աշխատանքները (1970թ.) հաստատեցին այդ կարծիքը (32, էջ 58):

Մ.թ.ա. VI–IV դարերի բնակավայրերի ուսումնասիրման հատուկ նպատակով տողերիս հեղինակը պեղեց Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի ծայրամասում տեղադրված Թմբադիր հնավայրը (1973թ.) և Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղից արևմուտք ընկած բնակավայրն իր դամբարանադաշտով (1975–1991թթ.) (127, էջ 500; 128, էջ 523;42, էջ 268-277):

Գիտական շրջանառության մեջ դրվեցին նաև թանգարաններում կուտակված նյութերը: Մ.Ա.Եսայանի հրատարակած Երևան քաղաքի պատմության (9, էջ 115; 10, էջ 172) և Դիլիջանի երկրագիտական (11, էջ 174) թանգարաններում հանգրվանած հնագիտական նյութերին վերաբերող ժողովածուներում ընդգրկվեցին նաև քննության առարկա դարաշրջանի նյութեր: Գ.Ա.Տիրացյանը հրապարակեց Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող խեցեղենի մի խումբ, որոնց մի մասը թվագրվեց մ.թ.ա. VI–IV դարերով (60, էջ 66).: Տողերիս հեղինակն անդրադառնալով այդ խմբի խեցեղենին, պարզեց, որ այն ձեռք է բերվել Երվանդ Լալայանի կողմից, 1904թ. Կարմիր վանքում (Աստապատում) կատարված հետախուզական աշխատանքների ընթացքում: Այդ նյութերը հանձնվել էին էջմիածնի թանգարանին, ապա բերվել Հայաստանի պատմության պետական թանգարան: Պրպտումները շարունակվեցին, և շրջանառության մեջ դրվեցին նաև Աուխանաթ թափայի խնդրո առարկա ժամանակաշրջանի, Նոյեմբերյանի Ջուջեվան (նախկին Չիչվական) գյուղում Մմբատ Տեր-Ավետիսյանի պեղած (ՀՊՊԹ, գույքահամարը՝ 1577-1582), 1936թ. Շամլուղում պատահականորեն հայտնաբերված (ՀՊՊԹ, գույքահամարը՝ 1354-1348) և Աթայբեկյանի վարելահողերի մեջ քանդված դամբարանների նյութերը (ՀՊՊԹ, գույքահամարը՝ 1942/135): Ս.Ա.Եսայանը պատմական ակնարկի ձևով ի մի բերեց և հրատարակեց Երևան քաղաքի տարածքում հայտնաբերված և ուսումնասիրված, III հազարամյակից մինչև մ.թ. I դարերի մշակույթին վերաբերող բոլոր հուշարձանները, անդրադառնալով նաև մ.թ.ա. VI – IVդդ. նյութերին (106, էջ 40, 103-109):

Ուսումնասիրությունները տարվում էին նաև մ.թ.ա. VI–IVդդ. մշակույթի տարբեր խնդիրների ուղղությամբ: Գ.Ա.Տիրացյանը պարբերաբար առաջադրեց և զարգացրեց ուրարտական և հայկական նյութական մշակույթների ժառանգականության հարցը, հենվելով խեցեգործական նյութի վրա (204, էջ 17-30): Ավելի ուշ, ներառելով նյութական մշակույթի այլ բնագավառներ, ընդլայնեց ուրարտա-հայկական մշակութային առնչությունների այլ շրջանակները (57, էջ 147-156, 62, էջ 43-60):

Քննության առարկա դարձավ նաև Արմավիրի շերտագրության հարցը: Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսովը փորձեց Արմավիրի արևմտյան լանջի սյունազարդ շենքը վերագրել հետուրարտական-աքեմենյան ժամանակաշրջանին (195, 15 57-67):

Մ.թ.ա. VI – IVդդ. Հայաստանի գունազարդ խեցեղենի խնդիրը ևս շարունակաբար գտնվել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Թեյշեբաինի վաղ հայկական դամբարանում գտնված գունազարդ հարակից անոթը առիթ տվեց Հ.Ա.Մարտիրոսյանին արտահայտվելու հօգուտ հայ-իրանական կապերի (153, էջ 137-150): Իսկ «Արգիշտիխինիլի» աշխատության մեջ նա զարգացրեց փռուգիական, հայկական և իրանական մշակույթների, հատկապես գունազարդ խեցեղենի տարրերի փոխներթափանցման միտքը (156, էջ 55-67): Այս հարցին անդրադարձել են նաև Գ.Ա.Տիրացյանը (202, էջ 265-266), Ժ.Դ.Խաչատրյանը (28, էջ 253-260) և Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսովը: Հայաստանի և հարևան տարածքներից հայտնի խեցեղենի զարդամոտիվների էության, և Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II-I հազարամյակների պատմական իրադրության տեսադաշտի վրա Ֆ.Ի. Տեր-Մարտիրոսովն, ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, գունազարդ խեցեղենը վերագրեց տեղական խուրրիական ցեղերին (196, էջ 53-71):

Գրավոր աղբյուրների և հնագիտական տվյալների լայն օգտագործմամբ Գ.Ա.Տիրացյանը պարբերաբար անդրադարձել է նաև մ.թ.ա. VI–IVդդ. Հայաստանում քաղաքների առաջացման սոցիալ-տնտեսական նախադրյալներին (207, էջ 87-98, 209, էջ 160-175):

Հետազոտությունները տարվում էին նաև նյութական մշակույթի տարբեր բնագավառների առանձին տեսակների ձևա-տիպաբանական համեմատական ուսումնասիրման եղանակով: Գ.Ա.Տիրացյանը հրատարակեց Հայաստանի մ.թ.ա. VI–IVդդ. գեղարվեստական մետաղագործությանը վերաբերող նյութերը (205, էջ 87-105), Ժ.Դ.Խաչատրյանը քննարկեց հին հայկական խեցեգործության ամենաբնորոշ նմուշներից մեկի՝ ըմպանակ-փիալաների տիպաբանական զարգացումը՝ ուրարտական նմուշներից մինչև ուշ հելենիստականները (30, էջ 269-278): Տողերիս հեղինակն Արմավիրի թաս-քրեղաններին նվիրված հոդվածում ելնելով դրանց շերտագրական և տիպաբանական դիտարկումներից, անոթները բաժանեց տարբեր խմբերի ու հետևեց դրանց զարգացմանը, թաս-քրեղանների ընդհանուր նախատիպը տեսնելով ուրարտական և փոքրասիական խեցեգործության մեջ (39, էջ 276-280): Շարունակելով Արմավիրի խեցեգործության տիպաբանական ուսումնասիրությունը և մ.թ.ա. VI–IVդդ. նյութերի զատորոշումը, խնկարկման անոթների կափարիչների ձևաբանական քննության ու համեմատական նյութի հիման վրա դրանք վերագրեց վաղ հայկական մշակույթին (40, էջ 68-76): Խեցեգործական, մետաղագործական արտադրանքի, աշխատանքի գործիքների տիպաբանական և համեմատական ուսումնասիրությամբ վեր հանեց Շամշադինի շրջանի Նորաշենի մ.թ.ա. VI–IVդդ. հողագործական-անասնապահական ամրոց-բնակավայրի քիչ թե շատ ամբողջական պատկերը, որի մշակույթը զարգանում էր ոչ միայն տեղական, այլև Հայաստանի միասնական մշակույթի ավանդներով (41, էջ 281-290):

Ոճական, պատկերագրական, տեխնիկական տվյալների և զուգահեռ նյութերի հիման վրա Բ.Ն.Առաքելյանը հիմնավորեց էրերունի ամրոցի ստորոտում հայտնաբերված արծաթյա եղջերանոթների պատկանելությունը մ.թ.ա. VI–IVդդ.՝ վեր հանելով նաև դրանց բացառիկ նշանակությունն այդ դարերի մշակույթի և պաշտամունքային պատկերացումների ուսումնասիրման գործում (71, էջ 143-157): Իսկ «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության» գրքում հեղինակն ընդհանրացրեց պեղումներից, թանգարանների ֆոնդերից, մասնավոր հավաքածուներից ձեռք բերված փաստացի նյութերի ամբողջությունը, քննարկեց դրանց զարգացումը պատմական լայն տեսադաշտի վրա, մյուս դարաշրջանների նյութերի հետ ունեցած կապի մեջ, տվեց հայ արվեստի զարգացման երեք շրջափուլերն իրենց բնորոշ միտումներով (4):

Այսուհանդերձ, խնդրառու ժամանակաշրջանի նյութական մշակույթի անքակտելի մասը կազմող խեցեղենի, արտադրական միջոցների, զենք ու զրահի և զարդերի հետ կապված շատ կարևոր հարցեր մնում էին չլուսաբանված, կարոտ հետագա մանրակրկիտ և ամբողջական ուսումնասիրության:

Ներկա աշխատանքի նպատակն է աշխարհագրական և ժամանակագրական ամբողջության մեջ ուսումնասիրել Հայաստանի մ.թ.ա. VI–IVդդ. նյութական մշակույթը, առանձնացնել ողջ մշակույթի բաղկացուցիչ մասերի տիպաբանական շարքերը, որոշել դրանց զարգացման հիմնական միտումները, արձանագրել նոր ձևերի հանդես գալը և նախադրյալներ ստեղծել այդ մշակույթի մասնատված ժամանակագրություն մշակելու համար, որը և ձեռք կբերի թվագրող նշանակություն:

Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ստիպված ենք սահմանափակել Հայաստանի Հանրապետության ներկա աշխարհագրական տարածքով, որը պատմական Հայաստանի մի փոքր մասն է միայն: Այս սահմանափակ տարածքը, սակայն, համընկնում է երկրի սիրտը հանդիսացող Արարատյան դաշտավայրին՝ իր հարակից շրջաններով, ուր կարելի է հետևել մշակույթի զարգացման չընդհատվող գծին: Այսն աշխատության մեջ օգտագործված են այդ տարածքից ցարդ հայտնի ողջ նյութերը՝ հայտնաբերված թե՛ կարգավորված պեղումների միջոցին, թե՛ պատահական գտնված, թանգարաններում կուտակված, հրատարակված և չհրատարակված, որոնք կարող են թվագրվել մ.թ.ա. VI–IV դարերով: Նյութերի բացարձակ թվագրման համար որպես հիմնակետեր օգտագործված են հավաստի թվագրված հնագիտական համալիրները: Որոշակի ժամանակագրական խմբերն առանձնացվել են տարբեր տիպաբանական շարքեր առարկաների միասնական հայտնաբերման փաստի հիման վրա:

Աշխատանքում փորձ է արվել մ.թ.ա. VI–IV դարերի ողջ նյութական մշակույթը ենթարկել ձևա-տիպաբանական դասակարգման: Այս դասակարգման հիմքում ընկած է առարկայի ձևը, նյութը, հարդարման տարրերը և պատրաստման տեխնոլոգիան: Նման դասակարգումը հնարավորություն է ընձեռել որոշել առանձին տիպերի, տեսակների տեղը, նշանակությունը, ժամանակը, խումբը և հետևելու դրանց ծագման, զարգացման ու տարածման ուղիները, դատողություններ անել նյութերի պատրաստման տեխնիկական հարցերի վերաբերյալ: